

ՏԱՄՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր ըստ 2 կոպեկի.

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն ղրքով և նոյն պրոգրամայով Միւր կը ստանանք սեփա-
կան ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կեց ամսականը 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՔԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկի-
ցում, Թամարի կողմէն).

Կայտարարութեան ուրիշ թղթերից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գրուի հետեւեալ հա-
ցով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», Тифлисъ, Редакция du jour-
nal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով.
Բառեր վճարվում է 2 կոպեկի.

«Մշակ» առաջին երեք վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպա-
գրվում են միմյան լրագրից յայտարարութիւնները, մասնաւորապէս և պաշտօնական հաստա-
տութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում Մասնաւորապէս տպագրելը
ս ա ա ջ ի ն երեք վրա արժէ 4 ռուբլի, իսկ չ ո Ր Ր Ր Ր Ր Ր երեք վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԹՐՈՐԻՆ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

ПОДПИСКА НА 1891 ГОДЪ.

Въ слѣдующемъ году газета «Тифлисскій Листокъ» будетъ выходить по прежнему ежедневно, исключая дней постѣпраздничныхъ. Редакція главнымъ образомъ посвятитъ свои силы ин-
тересамъ Закавказскаго края и, желая дать больше матеріала для чтенія, будетъ выпускать
въ недѣлю два раза газету въ шесть страницъ.

(Въ программѣ входятъ всѣ общія отдѣлы ежедневныхъ изданій).
Составъ Редакціи будетъ объявленъ въ началѣ будущаго декабря, послѣ того, какъ Ре-
дакція получитъ согласіе нѣсколькихъ лицъ, обѣщавшихъ ей свое сотрудничество съ 1891 года.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой: на годъ 4 р. —	Съ пересылкой: на годъ 5 р. —
» » на полгода 2 » 50 к.	» » » полгода 3 » —
» » » 3 мѣс. 1 » 25 »	» » » 3 мѣс. 2 » —
» » » 1 мѣс. — 75 »	» » » 1 мѣс. 1 » —

Подписка исключительно принимается въ г. Тифлисѣ, Барятинская ул., д. Ротинова.
3—3

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի համեմատական նկատողութիւն
մեր համբարներէ և եւրոպացի միջ-
նադարեան ցէխական միութիւններէ
մասին:

Դ. Օտար քաղաքից եկած վարպետն ե-
րի ընդունելութեան հոգանակը: Միջնա-
դարեան ցէխական միութիւններն ունէին բուն
տեղական (G. Schönberg p. 13—16 (Hildebrands
Jahrbücher B. IX) բնութիւն: Նրանց արտօնու-
թիւնն էր որոշ քաղաքի համար պատրաստել հար-
կաւոր և պահանջել ասպանները: Օտարական-
ներին ազատ իրաւունք էր տրվում իրանց ար-
հեստով պարագիւր մի քաղաքում միայն այն ժա-
մանակ, երբ տեղացիներից այդ արհեստով պա-
րագիւր չը կար: Ուրեմն ամեն օտար նախ քան
մտնել մի օր և է արդէն գոյութիւն ունեցող
ցէխական միութիւն, ստիպված էր առաջ քաղա-
քացիական (Maurer B. II, § 286 p. 453) իրա-
ւունք ձեռք բերել—այն է բնակիչ գրվել: Այլա-
պէս ցէխական միութիւնը այդպիսիներին կամ
բռնաբերել էր, ընդունում, թէկու՛ղ նրանք լի-
նէին ամենահնուտ վարպետ, կամ ընդունում էր
չափ ղեւարարութեամբ: Ցէխները ամեն տեսակ աշ-
խատում էին մրցութեան առաջն առնել: Անելի
ազատ մուտք ունէին քաղաքները. նրանց ղրու-
թիւնը կախված լինելով վարպետների հաճութիւնից,
չէին կարող նրանց հետ մրցել: Ընդհանրապէս
վարպետները ամեն ջանք գործ դնելով նրանց
հարստահանելու, միշտ կախված և հպատակված

գրութեան մէջ պահելով, նրանցից աւելի օգուտ
էին քաղում: Երբ քաղաքները տեսնելով իրանց
վատ գրութիւնը կազմեցին առաջին քաղաքների
միութիւններ (Gesellenverbände), նրանք ևս
աշխատում էին հեռացնել իրանց բնիկ քաղաքից
նորեկ, օտար քաղաքներին:

Մեր երկրում այս տեսակ կանոններ գոյու-
թիւն չեն ունեցել: Պարսկաստանում դեռ XVII
դարում, Շարդէնի վկայութեամբ, արհեստաւորը
այս տեսակ արգելքներից ազատ էր. նա ցանկա-
նալով դուքան բացանել և իր արհեստը շարու-
նակել, ուղղակի գիւմում էր ուստաբաշուն:

Այս վերջինը նրա անունը գցում էր արհեստա-
ւորների ցուցակը և սրանով ամեն ձեւակաւու-
թիւն վերջանում էր: Համայնական կանոններ գոյու-
թիւն ունէին Թիֆլիսում (Ю. Ахвердовъ, Тифл.,
Амкары, стр. 10—11) այստեղ նորից վարպետը
ներկայանում էր իր արհեստակից ուստային, որը
համբարութեան համաձայնութեամբ նրան ցուցա-
կադրում էր: Երբ նկատվում էր նրա անփութութիւ-
նը, ստիպում էին նրան փակել դուքանը, որպէս զի
նա արհեստի հեղինակութիւնը շարատաւորի:
Ախալցխայում նորեկ վարպետից պահանջում էին
վկայական իր առաջվան ուստաբաշուն. արված
եթէ վկայական նա չունէր, նրան ներթափում
էին քննութեան: Փորձված վարպետին առանց
արգելքի ընդունում էին իրանց էստաֆութիւննե-
րը, իսկ անփութը ստիպված էր կամ ժամանա-
կաւոր քաղաքներին անել, կամ մի օր և է
տեղացի վարպետի օգնական լինել: Եթէ նա չէր
ընդունում այս պայմանները, նրան արգելում էին
քաղաքի շրջանում դուքան բաց անել և իր ար-
հեստով պարագիւր: Քաղաքի շրջանից դուրս,
նա ազատ էր: Նորեկը կարող էր քաղաքի բնակիչ
գրվել թէ ոչ, դա նրա կամքից էր կախված: Ու-
րեմն Ախալցխայում օտարից պահանջում էին միայն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրութեան քուէն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ կարծիք. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական կրիւններ. Քաղաքացի-
կ. Պօլսի լրագրիչներից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Համբարական միութիւններ.

ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ՔՈՒՆԵՆ

Շուտով լրանում է «Մշակ» գոյութեան
տասն և ութերորդ տարին և մօտենում է
մեր լրագրի գոյութեան տասն և իններորդ
տարեշրջանը:

Տասն և ութ տարի շարունակ մենք աշ-
խատեցինք մեր կարողութեան չափ ծա-
ռայել հայոց մտաւոր զարգացման գործին,
առանց սպասելու այդ հասարակութեան
կողմից որ և է շնորհակալութեան ցոյցի:
Մենք մեր աշխատանքի վարձատրութիւն
էինք համարում այն իրողութիւնը, որ
ընթերցասիրութիւնը հայերի մէջ փոքր
առ փոքր զարգանում է, որ մեր կարողու-
թեան չափ սերմանած մտքերի պոռնկները
մի ժամանակ կը վայելէն ապագայ սերունդ-
ները:

Ինչքան էլ աշխատեցին, ջանք թափեցին
«Մշակ» թշնամիները, այսինքն գրեթէ
ամբողջ հայոց կովկասեան մամուլը ցոյց
տալ, հաւատացնել հասարակութեանը թէ
«Մշակ» ընկել է, թէ «Մշակ» այլ ևս
համակրողներ չունի,—հայոց հասարակու-
թիւնը այդ բոլոր ասածներին հակառակ
ուղիղ այս անցնող 1890 թւին, ապացու-
ցեց որ համաձայն չէ «Մշակ» թշնամինե-
րի կարծիքի հետ և այս տարվայ ընթաց-
քում, եթէ այդպէս կարելի է ասել, մեզ եր-
կու անգամ համակրութեան քուէն՝ տուեց:

Այդ համակրութեան քուէն արտայայտ-
վեց ներկայ տարվայ ընթացքում երկու
անգամ առաջին անգամ նա արտայայտվեց

գիտութիւն և հմտութիւն ընտրած արհեստում:
Ուրիշ պայմաններ նրան չէին առաջարկում էստա-
ֆութիւն մտնելուց, նորեկը, ի հարկէ, պարտա-
կան էր վճարել այն տուրքը, որ նշանակված էր
յօդուտ համբարութեան գանձի: Աղքատներին
ազատում էին այս տուրքից:

Բացի սրանից մեր համբարութիւնները առանձ-
նայատկութիւններից մին էլ այն էր, որ նրանք
առանց ազգի և կրօնի զանազանութեան ընդու-
նում էին ամեն մարդու: Այս տեսակետից, մեր
համբարութիւնը աւելի ազատամիտ էր, քան թէ
եւրոպական ցէխները:

VI

Համբարութիւնը իբրև միութիւն ունի իր ըսկզ-
բունքները, սրանք կազմում են նրա ներքին
կազմակերպութեան հիմքը: Առանց այս հիմքի
համբարական միութիւնը կամ կերպարանաւորու-
վում է, կամ բոլորովին քայքայվում է:

Ինչ սկզբունքների և հիմքի վրա հաստատված
էին թէ մեր համբարութիւնները, թէ եւրոպացի-
ներին հին ցէխական միութիւնները: Ա. Համբար-
ութիւնը կամ ցէխը իբրև և կրօնական և բարոյա-
կան միութիւն է: Բացի ընդհա-
նուր կրօնից, ամեն միութիւն, թէ համբարական
և թէ ցէխական, ունի իր պաշտօնաւոր: Պաշտոն
սուրբը համարվում է արհեստի իսկական կամ
առաւանակական հիմնադիրը: Այս տեսակետից
մինչև անգամ երկրի Արարիչն էլ համարվում է ար-
հեստի հիմնադիր: Որքանակ, Թիֆլիսի բրուտների
համբարութիւնը իր հովանաւորից, պաշտպանը
և արհեստի հիմնադիրը համարում է Աստուածութիւ-
նը, որովհետև նա աշխարհի ստեղծման օրից առա-
ջին անգամ շաղթանց կաւը և կաւից ստեղծեց—
չլինեց: Աղամի մարմինը:

Հովանաւորից պատրօնի տօնին ամեն մի համ-
բարութիւն, ամեն մի ցէխական միութիւն մա-

այս տարվայ մայիս ամսին, «Մշակ» խմբա-
գրի գրական գործունէութեան քսան և
հինգ ամեայ յօդերեանի տօնախմբութեամբ,
իսկ երկրորդ անգամ սեպտեմբեր ամսին,
այն վերին աստիճանի սրալիւր ընդունելու-
թեամբ, որ զտաւ «Մշակ» խմբագիրը
երևանեան նահանգում իր արած ծանա-
պարհորդութեան ժամանակ:

Հասարակութեան այդ համակրութիւնը
մեզ համար ամենաթանկագին, ամենա-
բարձր վարձատրութիւն է, և «Մշակ»
քաջալերված հայ հասարակութեան կողմից
միջ մի տարվայ ընթացքում երկու անգամ
իրան տուած այդ համակրութեան քուէից,
—աւելի էլ մեծ եռանդով կը շարունակէ,
իր կարողութեան չափ, նոյն ուղղութեամբ,
նոյն շաւղով ընթանալ, որով ընթացել է
տասն և ութ տարվայ միջոցում, քանի
որ հայ հասարակութեան կողմից տուած
վերոյիշեալ համակրական կրկնակի քուէի
մէջ մենք պէտք է տեսնեցն ոչ այնքան
համակրութիւն դէպի անձնաւորութիւնը,
որքան դէպի այն ուղղութիւնը, որի ներ-
կայացուցիչն էր աշխատել հանդիսանալ տա-
սն և ութ տարվայ ընթացքում այդ նոյն
անձնաւորութիւնը:

Հասարակութեան կողմից տուած համա-
կրութեան քուէն՝ ամենամեծ վարձատրու-
թիւն է մեր անցեալ, և ամենալուսահեղի
քաջալերութիւն է մեր ապագայ գործու-
նէութեան համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Դեկտեմբերի 13-ն

Ամսիս 9-ին կայացաւ Կովկասի Հայոց Բարե-
գործական ընկերութեան Կարօն տեղական ճիւ-
ղի ընդհանուր ժողովը: Կանոնադրութեան համա-

տուցանում էր պատարագ (Maurer B. II, §§
277—278, p. 401—409. Otto Gierke B. I. §
38 p. 384—385. Neuburg, p. 81—87. Fagniez,
p. 38—39. Le livre des métiers, p. XCII—
XCIX (introduction). Eelix De Vigne. Moeurs et
usages des corporations des métiers (édition
1857). p. 71—76. Toubeau De Maisonneuve, p.
XVII—XX (introduction), անում էր մատաղ,
կատարել էր տալիս հոգեհանգիստ հանգուցեալ
համբարակիցների հոգու փրկութեան համար:

Շատ համբարութիւնները դրօշակների վրա մեղա-
նում և միջնադարեան ցէխներում նկարագրված
է այդ պատրօնի պատկերը: Ջարմանալ է, որ մեր
համբարութիւններին և միջնադարեան ցէխների մի
քանիսի պատրօնները մի և նոյն սրբերն են համար-
վում: Օրինակ մեր և Ֆրանսիացոց հիւսնիւրի
պատրօնը համարվում է Յիսուսի հայր Յովանի,
(Toubeau De Maisonneuve, p. III (introduction)
որովհետև նա ինքն հիւսն էր, այս պատճառով
նա համարվում է հիւսնների արհեստի հիմնադիր:

Մեր քարտաշների համբարութիւնների և Ֆրան-
սիացոց քարտաշների արհեստի հիմնադիրը և
պատրօնը համարվում է Սողոմոն իմաստունի
կառուցած տաճարի գլխաւոր ճարտարապետը:
Թէև մեզանում, այդ արհեստի հիմնադիրը երբեմն
համարվում է Խորվիրապայ վանքը շինող ճար-
տարապետը: (M. C. G. Simon, p. 86—89).

Ժողովուրդը պատմութիւնից չեղվում է, աւան-
դութիւնը այսպէս է: Երբ Մուղատ (այսինքն
Տրագատ) թագաւորը շինել տուեց Խորվիրապայ
վանքը, նրա գեղեցկութիւնը թագաւորին այնքան
զուր եկաւ, որ նա չէր կամենում ուրիշ տեղ
տեսնել այդ տեսակ գեղեցկատուն տաճար: Նա
մտածում էր ճարտարապետին սպանել տալ, չայց
թագաւորի չար միտքը նա հասկացաւ և խնդրեց
Աստուածանից ազատել իրան մահից: Աստուծու-

ձայն պէտք է ընտրվեն ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, վարչութեան երկու անդամներ և երեք փոխանդամներ: Միաձայն հաստատված ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց արժ. Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց, իսկ քարտուղար վերընտրվեց պ. խաչ. Մանուկընտանց: Վարչութեան անդամներ ընտրվեցան՝ տիկին Նունէ Մէլիք-Փարսադանեանց (վերընտրվեց) և պ. Սարգիս Տէր-Յովհաննիսեանց: Փոխանդամներ՝ պ. պ. Մարտիրոս Բաղդասարեանց, Սեդրակ Գրիգորեանց և խաչ. Դիւանեանց: Տեղական վարչութիւնը ներկայացրեց ժողովին 1889 և 1890 թվականի ելուտից հաշիւը, երկու երեք, որ այդ ժամանակամիջոցում մուտք է եղել՝ անդամական տուրք՝ 840 ռուբլի, նուէրներ և զանազան օգուտներ 316 ռ. 72 կոպէկ, մի պարտանդեմից՝ 142 ռ. 14 կոպէկ, ընդամենը՝ 1298 ռուբլի 86 կոպէկ: Եւրեղէն տեղիս հայոց զուգորդներին օժանդակութիւն՝ 400 ռուբլի, աշակերտներին և աշակերտութիւններին շոր, թոշակադրամ և ուսումնական պիտուկներ՝ 261 ռ. 73 կ., հիմնական զորդարան-ընթերցարանի համար՝ 100 ռ. կարօտակներին (ի թիւս որոց՝ ոտը ջախջախված մի մշակի հիւանդանոցում մինչ անողջանալը պահելու համար) 244 ռ. 80 կ., դիւանական ծախսեր՝ 52 ռ. 78 կ., անձեռնմխելի 50% դուրսը ընդհանուր խորհրդին ուղարկելու համար՝ 65 ռ. ընդամենը՝ 1124 ռուբլի 31 կոպէկ: Մուտքի մէջ աւելացող 174 ռ. 55 կ. կանոնադրութեան § 49-ի համաձայն ուղարկվելու է ընկերութեան խորհրդին: Անցեալ 89 և ընթացիկ 90 թ. հաշիւները նայելու համար վերաստուգող յանձնաժողով ընտրվեց երեք հոգուց բաղկացած՝ Ամուհեան վարչութիւնը ներկայացրեց աւալիկայ 1891 թվ. նախահաշիւը նայելու և վաւերացնելու համար: Նախահաշիւի համաձայն վարչութիւնը մուտք է սպասուում. անդամական տուրք 400 ռուբլի, նուէրներ՝ 200 ռ., պարտանդեմից 40 ռ. ընդամենը՝ 840 ռ.: Եւրեղէն տեղիս հայոց հոգևոր զուգորդներին՝ 400 ռուբլի, քաղաքիս հայոց երկուսու և ուսաց Մարիամեան օրիորդաց դպրոցի չքաւոր ուսանողներին շոր աւանդու համար 150 ռ., հիմնական զորդարան-ընթերցարանի համար 200 ռուբլի, քաղաքիս տառապեալներին օգնելու համար 168 ռ., դիւանական ծախսեր 30 ռ., անձեռնմխելի դուրսը ընկերութեան խորհրդին ուղարկելու համար 42 ռ., ընդամենը 990 ռուբլի: Ծախսեր համար պահանջող 150 ռուբլի վարչութիւնը մուտք է խորհրդից իրաւունք ստանալ ծախսելու 1889 և 1890 թվերի արդիւնքից մնացորդ 174

զօրութեամբ դմելով վերջացնելուց յետոյ, ճարտարապետը թե ստացաւ և թուա Ղարաբաղայանոց նա շինեց Տաթև վանքը: Վանքի անունը այս աւանդութեամբ կազմվում է «Տայ» (տացէ Աստուած) և «Թա» բառերից: Վարդանան իր արհեստը սովորեցրեց և նրա աշակերտները տարածեցին ճարտարապետութիւնը Հայաստանում: Ահա ժողովրդի աւանդութիւնը:

Թող ժողովուրդը չնդվի պատմութիւնից, թող նրա պատմածը լինի պարզամիտ աւանդութիւն և մինչև անգամ առասպել: Մեզ համար հետաքրքրւոր նրա դատողութեան և աշխարհայեցողութեան ներքին միտքն է: Ժողովուրդը ձգտում է զինել արհեստը և գիտութիւնը մի օր և է սրբի և միջնի անգամ Աստուծո հովանաւորութեան տակ: Այս կերպով աշխատանքի և արհեստի նշանակութիւնը բարձրանում է ժողովրդի աչքում. սրբի հովանաւորութեամբ արհեստն ինքն մի տեսակ, եթէ կարելի է այսպէս ասել, սրբանում է: Այս տեսակ սկզբունքների վրա հիմնված միութիւնը, անկասկած, պէտք է ստանար կրօնական և բարոյական հաստատութեան կերպարանը: Յիւրախ, մեր համբարութիւնները կապված են այս ըսկզբունքով և «եղբայրական» հոգով:

Մեր հաւաքած տեղեկութիւններից *) երևում է, որ մեր համբարական միութիւնների պատրօնները և հիմնադրները հետեւեալ սրբերը կամ թէ առասպելական անձինք են համարվում.

*) Բարոյական պարտքն եմ համարում յայտնել իմ խորին շնորհակալութիւնը թիֆլիսի мѣщанскій сѣбѣ рѣшѣ պ. Խաչակ Սյոմոնովիչ Բուդախեանցին, որ նա օգնեց ինձ հարկաւոր տեղեկութիւններ ժողովը համբարութիւնների աղաթների և ներքին կազմակերպութեան մասին: Նա խոստացաւ նկարել տալ համբարների բոլոր դրօշակները, որ մենք, իբրև համբար, կը կցնեք մեր ապագայ աշխատութեան և այս կերպով դրօշակների վրա նկարագրած պատկերները չեն անհետանայ: Ահա

1. 55 կոպէկից, որ ինչպէս վերև յիշեցինք՝ ուղարկվելու է խորհրդին: Այդ նախահաշիւն անփոփոխ կերպով ընդունվեց ժողովի կողմից: Այդտեղ ժողովում յայտնվեց, որ անցեալ տարի թեմական ս. առաջնորդից թոյլտուութիւն ստացվեց տն և հանդիսաւոր օրերում զանազան շրջաններ Բարեգործական ընկերութեան տեղիս ձիւղի օգուտն և վարչութիւնը՝ անդամների միջոցով սկսեց իւրաքանչիւր տն և կիրակի օրեր դանձանակ ման ածել, ուստի տեղիս հ. փոխանորդը դիմելով վարչութեանը յայտնեց, որ կամ սա աղապէս յաճախ չը շրջեցնէ զանազաններ, որպէս զի կարելի լինի առանձնապէս հ. փոխանորդին դիմող աղքատներին համար եկեղեցում ժողովարարութիւն անել՝ կամ նոյն նպատակի համար ամսական եօթն ռուբլի հատուցանէ հ. փոխանորդին, որպէսի դուրսարժ նա պէտք է մասամբ բաւարարութիւն տար իրան դիմող կարօտեալներին: Վարչութիւնը պատասխանելով հ. փոխանորդին, յայտնում էր որ թէ ուսումնարանին, թէ չքաւոր աշակերտներին և թէ կարօտեալներին օգնելու համար վարչութիւնը բաւական զուրմար է ծախսում և ուրեմն չքաւորներին առանձնապէս օգնելու համար կարելի չը կայ: Այդ գրութիւնները ուղարկվեցան ս. առաջնորդին, որը և կարգադրել էր միայն տամ որոշ օր ընթացք մի տարվայ ման ածել զանազանակ: Ի նկատի ունենալով որ տան օրվայ ընթացքում դոյացած դրամը մի նշանաւոր դուրսը չէ կազմելու և նախահաշիւի մէջ 40 ռուբլի է նշանակված, ժողովարարները ունեւ առաջարկում էին բոլորովին չը շրջեցնել զանազանակ, բայց ժողովի մեծամասնութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը, որովհետեւ իրաւունք չէր համարում մերժել եկամտի որ և է աղքատ, որքան և քիչ արդիւնք սպասվէր նրանից: Այդտեղ գրադարան-ընթերցարան բանալու համար արդէն գրված է ընկերութեան խորհրդին և սպասվում է թոյլտուութիւն: Անցեալ և ներկայ տարիների նախահաշիւի որոշված էր 100 ռ. եկող տարի նոյն նպատակով տրվելու է 200 ռ. ընդամենը՝ զորդարան-ընթերցարանի համար կայ 300 ռուբլի:

ՆԵՐՅԻՆ ԼՈՒԹԵՐ

Ստացանք ՄՕՍԿԱՅԻՑ հեռեկալ հեռագիրը. «Շաբաթ, դեկտեմբերի 15-ին տեղի ունեցաւ հայադէտ էմմին փառաւոր թաղումը: Յուդարկաւորութեան հանդիսին ներկայ էին զանազան ընկերութիւնների ներկայացուցիչները և հանգու-

- 1) Թիֆլիսի բոլոր տն երի փերը, ինչպէս վերև յիշեցինք, համարվում է Աստուած:
 - 2) Դեր ձախն երի փերը (Թիֆլիսի) են Աղամ և Նւան, որովհետեւ նրանք առաջին անգամ տեղեկանքով ծածկեցին հոգեղէն մարդու մեղքութիւնը:
 - 3) Ղազազն երի և մի մագործն երի (Թիֆլիսի և Ախալցխայի) փերն է Յօր Նրանիլին, նրա մարմնից իբր թէ դուրս էին գալիս երեք տեսակ որդեր՝ շեք ամի (զապանները ապրելու միջ են պատրաստում թիւերը), մեղու (մոմա գործները մեղրամիմը են պատրաստում մոմերը)
- այն անձինք, որ նա հրաւիրեց մեզ մօտ տեղեկութիւններ հաղորդելու նպատակով: 1) Ամբարդան Նրանց (թաղմալների ուստաբաշին), 2) Կարապետ Գրիգորով (ախալան շորերի դերձակների ուստաբաշին), 3) Աւետիք Մաղմաեան (կուպրակների ուստաբաշին), 4) Ալեքս Ալեքսեան (զարգարների ուստաբաշին), 5) Շաբար Ագարոյեան (հոգեբանների գեղեցիկ կարողների ուստաբաշին), 6) Սարգիս Թոմայեան (բուհարների ուստաբաշին), 7) Գեղզ Աղաջանեան (սարաջների և դալթաղների ուստաբաշին), 8) Իվան Սարգիսեան (դիւնադորների ուստաբաշին), 9) Սարգիս Վարդաշիվի (թոնրի հաց թիւղների ուստաբաշին), 10) Գեորգ Գալստեան (պղնձագործների ուստաբաշին), 11) Գասպար Զօհրաբեան (դարաղների ուստաբաշին), 12) Սարգիս Զիւրաբեան (փախիւլի), 13) Իվան Մօսիկով (դալթաղների ուստաբաշին), 14) Բաբա Ալիշ (կապտօգների ուստաբաշին), 15) Խաչակ Բօնակեան (բուրքի), 16) Յովհան Սկանդարեան (նախաշարների ուստաբաշին), 17) Յարութեան Թանկեան (կէկէ), 18) Սարգիս Փանդոսեան (գզրարների ուստաբաշին), 19) Յակօբ Ալիբախեան (կարգական կոչակարների ուստաբաշին), 20) Դիմիտրի Զանկով (բրուտների ուստաբաշին), 21) Պողոս Յարութեան (չուստ կարողների ուստաբաշին), 22) Զաքար ձեղեղեան (դարբների ուստաբաշին), 23) Գարսո Ավալեղեան (ալաֆների ուստաբաշին), 24) Շաբար Ասարոնեան (պարտնոների ուստաբաշին), 25) Մինաս Թանկեան (խարաղների ուստաբաշին), 26) Գրիգոր Նրեմեանց (սարաջների ուստաբաշին):

ցեալի դադարի վրա դրվեցան բազմաթիւ պատկերներ:

Տեղական լրագրիւններում կարգում ենք, որ Ախալցխայի նախկին գաւառապետ, բարոն Տիգէն-հառեղէն նշանակվել է Երևանի փոխ-նահանգապետ:

Յայտնում ենք Թիֆլիսի մեր բաժանորդներին, որ «Մշակ» բաժանորդարութիւնը առաջիկայ 1891 թվ. համար, ընդունվում է թէ խմբագրատանը և թէ Խիթիկէի պալլիլիոնում (Ալեքսանդրեան այգու մօտ):

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Տիֆլիսի Փառաձեմ, որը կրում է գոյութիւն չունեցող Թիֆլիսի դերասանական խմբի դերասանուհու տիտղոսը, այստեղ մի ներկայացում տուեց: Խաղացին «Լոյս և խաւար» և «Տիֆլիսը ննջում է» պիեսները: Տեղական թատրոնատէրների խումբը չը կամեցաւ մասնակցել այդ ներկայացմանը, քանի որ այդ խումբը խաղում է միշտ միմիայն բարեգործական նպատակով տրվող ներկայացումների մէջ:

Մեզ գրում են Կարսից, որ այդ քաղաքի նոր դէպուստատն էր ընտրվեցան եկող 1891 թվ. համար՝ պ. պ. Բարսամեանց և Մ. Մանուսահանց:

ԳԱՆՁԱԿԻ նահանգի մի քանի հայ գիւղեր, ինչպէս մեզ գրում են, անդադար ստիպված են զանգառվել հարեան Արմավր, Իրմաշու և Ղաղաղ-Թաֆա թրքաւոր գիւղերի բնակիչների դէմ, քանի որ այդ վերջինները անարգել կերպով անդադար փախցնում են հայերից առաւոր, ոչխար, և ձի, թոյլ տալով իրանց կենդանիներին էլ առանձն հայապատկան արտերի վրա: Յանկալի է, աւելացնում են մեր թղթակիցները, որ աւաղորդութիւն դարձնվել վերջինիս գոգութիւններին և յաբիշտակութիւններին վերջ տալու վրա:

Լսում ենք որ Թիֆլիսի Գոմայի երրորդ կարգի ընտրողներից ունեւ արդէն բողոք են ներկայացրել, ուր հարկն է, երրորդ կարգի ձայնաւորների ընտրողական ժողովի անկանոնութիւնների մասին:

ԳԱՆՁԱԿԻ նահանգից մեզ գրում են, որ այս տարի կենսական պիտուկները նահանգում բաւական է ծան են ձայնի պուղը, լաւ տեսակից, արժէ 70—80 կոպէկ, աւելի ստոր տեսակից՝ 60

և կարմիր որդ (кашениль). ներկարարները նրանից պատրաստում են կարմիր ներկ և գործածում ապրելու ներկելու համար: 4. Կաշի գործն երի—դարաղների, կոչակարների և ուրիշ տեսակ կաշի ոտնաման պատրաստողների (Թիֆլիսի և Ախալցխայի)—փերն է Նուր Եղիա, կամ թէ Եղիա մարգարէն, որովհետեւ նա, ըստ աւանդութեան, իր կաշիքէն վերմակը կարեց: 5) Զարգարն երի փերը (Թիֆլիսի և Ախալցխայի) համարվում է Պրոսկուս ճարտարապետը, որովհետեւ նա իբր թէ առաջին անգամ զարգարից տապանակ ուխտին, հնարեց արծաթ կցցնելու արհեստը և սովորեցրեց այս արհեստը մարդկանց: 6) Դարբինն երի և պղնձագործների (Ախալցխայի) փերը համարվում է Կայէնի սերունդ Օտեղը և Թօփեղը, որովհետեւ նրանք առաջին անգամ սկսեցին երկաթագործների և պղնձագործների արհեստը: 7) Ղաւաշին երի (Թիֆլիսի) փերն է սր. Յակօբ, որովհետեւ նա սովորեցրեց աման կէկէ, մինչև նրա դալ չէին կարողանում կէկէ կցցնել պղնձին, իսկ նա հնարեց նախադրել և նրանով կէկէ կցցրեց: 8) Զինագործն երի (Ախալցխայում) փերն է Օհան Օձնեցին, որովհետեւ նա սուրն օրհնեց քրիստոնէութիւնը պաշտպանելու համար: Իսկ Թիֆլիսում նրանց փերն է Դաւիթ մարգարէն, որովհետեւ նա պարսեմով սպանեց Գողթիթին, իսկ սրով կորեց նրա զուրը: 9) Հացաթուխն երի փերը (Թիֆլիսում) համարվում է Քրիստոս, որովհետեւ նա մի քանի հացով կերակրեց հազարաւոր մարդկանց: 10) Ներկարարն երի փերն է (Թիֆլիսում) Գամաղեան և Սէթ մարգարէք, նմանապէս Յիսուս Քրիստոս ինքը, որովհետեւ առաջ իբր թէ ներկարարի աշակերտ էր: Իր վարդապետ Քրիստոս կամեցաւ փորձել, ասելով թէ մի կարատում կարելի է 12 զոյն ներկել: Վարպետը բարեպետ, նրան դուրս հանեց խանութից և կա-

կօպ., դարու պուղը՝ 35—40 կ., զինու բաթ. մանը (9 շիշ) 30—40 կօպ., մսի ֆունար 4—5 կօպ., իւղի ֆունար 30 կօպ., վերջապէս ձուլ, հատը՝ 5 կօպէկ:

«Тифл. Лист» լրագրիւրը հաղորդում է, որ Թիֆլիսում կազմվել է մի ընկերութիւն, որը պատրաստում է ունի քաղաքից 7 կամ 9 վերջ հեռու մի բարձրութեան վրա գտնվող, Լիւսնունված տեղում՝ փոքրիկ ամառանոցներ ներկելու նպատակով: Բաժանում է արդէն հոգեւոր ժողովի և ամբողջ տեղը 51 բաժնիների վրա: Եւրեղէն տեղիս հայոց, այդու, դրօշակները և այլն և այլն: Հետաքրքրել է իմանալին զորութեան մէջ է Թիֆլիսից դէպի Լիւսնունված ճանապարհը: Եթէ ճանապարհը վատ է, հազար թէ նոր ամառանոցի տեղը աղողութիւն կունենայ: Այսպէս նշանաւոր հարցերից միմէն է խմելու ջրի հարցը: Արեւիք ջուրը աղի ջուր է: Լիւսնունվածը Յանկալի կը լինէր որ վերջինիս ընկերութիւնը նախ ծանօթացներ հասարակութեանը նոր ամառանոցի տեղի դիրքի, կլինալական պայմաններին, հաղորդակցութեան միջոցներին, ջրի յատկութեան, լուսանկարութեան դրութեան հետ և այլն:

Գանձակցի պ. Մկրտիչ Աֆանասեան նուիրել է 1891 թվականի «Մշակ» մի օրինակը Գանձակի ս. Լուսաւորիչ եկեղեցու օրիորդաց միջնոցին:

Հարց է յարուցվում, որ թոյլ տրվի Պետերբուրգի նահանգի մի քանի գաւառներում, գիւղական դպրոցներին կից, տն և կիրակի օրերը դասախօսութիւններ կազմել՝ առողջապահութեան մասին: Անկասկած, կառավարութեան կողմից այդ հարցը համակրութիւն կը գտնի և կիրաւորվի:

Այս օրերս մի տիկին, խնդրել է տուել պետական կալուածների միջնատրութեան, թոյլտուութիւն խնդրելով բանալ այդեղործական դպրոց, յատկապէս կանանց համար: Խնդրատու կինը իր ուսումը աւարտել է Յիւրիլի համալսարանի բնագիտական բաժնում:

Դեկտեմբերի 14-ին, բանկի թատրոնում օպերային խումբը ներկայացրեց մի նոր օպերա՝ «Ինքն Յովնաթան» անունով: Խաղապէս դա մի ամբողջութիւն ներկայացնող օպերա չէ, բայց բաւական սրամիտ, հետաքրքրի, բնական և ժամանակակից:

Բանկի վայրը չպուտեց ետեղից, վայրը խրվեց գետինը և դաւաւ կանչի ծառ: Վարպետը երբ դարձաւ իր դուռնը և կամեցաւ թաթախել թիւերը հանել ներկի կարասից, տեսաւ, որ նրանք ներկվել են 12 զոյնով: Վարպետը մեղաւ եկաւ, բայց Գրիստոս արդէն գնացել էր:

Այս պատճառով ներկարարի կարասը սուրբ է համարվում, երեկայոց «Լուսնեց» կամ «Նորոց» առնելու ժամանակ բռնկում են կարասի լողկով խաչած և նշան անելով՝ նրա ճակատին և կուրծքին:

11) Ապուս Նիւրի (Թիֆլիսի) փերն է Ներսիս Գլանեցի, ըստ աւանդութեան նա իբր թէ թաթախեց թէ եղել: Այս արհեստի նմանապէս հովանաւորի է համարվում սուրբ Սարգիսը, նա իբր թէ օրինակել թամբը դրել է քոչ ձիւս վրա և գերութիւնից աղաւել հրէայ կոյս արջիկը: 12) Կուպրաշին երի (Թիֆլիսի) փերը համարվում է, երբեմն Արեւհամ, որովհետեւ նա առաջին անգամ զոհաբերութեան ժամանակ ուխտարկեց հանեց տիկը և կուպրաշիւնը տարածեց ժողովրդի մէջ: Երբեմն փեր համարվում է Թաղեւ Առաքեալ, որովհետեւ չարապրելու ժամանակ իբր թէ նրա կաշին քերթել են:

13) Դաւաղն երի (միայն Թիֆլիսի) երբեմն իրանց փեր հանաւում են Քրիստոսին, որովհետեւ նա ճանապարհորդութեան ժամանակ, տեսնելով դարաղների ծանր աշխատանքը, օրհնել է նրանց արհեստը: Մինչև այս օր էլ Թիֆլիսի դարաղները, ինչպէս մեզ պատմում են, զրած Աստուածածնի պատկերը՝ Քրիստոսը գրկումով բռնած: Տօներին ժողովուրդը գալիս է դարաղների պատկերին ուխտ: Աստուածածնի պատկերի առաջ վառած ճրագալոյսը դարաղների հաշտութիւնն է:

(Ը շարունակվի)

